

Բայց այդ տուրքը վճարողները քիչ են եղեր. —այո՛ւ—քիչ են և շատ քիչ, սակայն խնդիրը թույլ վրայ չէ, ոչ այ կարողութեան վրայ, այլ վճարելու, մի միայն վճարելու իրականութեան վրայ է. ով որ չվճարեր, քրէական չլինար տալ:

Վճարելու հաւանական կարողութիւնը կրնար թերեւս իրականաց հիմք ունենալ, ինչպէս որ ոմանք կը պահանջեն, եթէ վարչութիւնը քանի տարիներէ ի վեր 75 դրը թերհաշիւ տուրք չհաւաքէր, քանի որ կը հաւաքէ, ենթադրութիւնը կամ հաւանականութիւնը մէկ կողմ կը մնայ, և իրականութիւնը կը լսուի Սահմանադրութեան 63րդ, յօդուածին հետ: Թող վարչութիւնը դադարի նախ այդ տուրքը հաւաքէ և այն ժամանակ վճարելու հաւանական կարողութիւնը կամ ենթադրութիւնը թերեւս նշանակութիւն մ'ունենայ: Բայց հիմա չլինար ունենալ:

Հաւանական է որ վարչութեան անդամներէն ոմանք այդպիսի ձախող խորհուրդ մ'երկնած ըլլան սուտ սահմանադրութեան հաճոյ ըլլալու համար, բայց վարչական մարմնոյն ամբողջութիւնը մանաւանդ քաղ. ժողովը չենք յուսար որ համարձակի իւր ըրած օրինաւոր անօրէնութիւնը փոխելով Սահմանադրութեան 63րդ. յօդուածն աւելի և հետեւաբար ինքզինք ծանր պատասխանատուութեան ներքեւ ձգել:

Իսկ աղբային արոց հաւաքման ներկայ եղանակին գաղտնի, անոր ալ կանոնաւորութենէ զուրկ, թերի, և հետեւաբար դարմանի կարօտ ըլլալը ցուցած ենք լրագրոյս 1393 թուով: Քաղաքական ժողովոյ պարագն է՝ Սահմանադրութեան 92րդ. յօդուածին համաձայն ընդհանուր արոց բաշխման և հաւաքման եղանակը ժամ առաջ որոշել և ընդհ. ժողովոյ հաւանութեան ներկայացնել, որպէս զի ամեն անհատ իւր կարողութեան ներած տուրքը տարուէ տարի կանոնաւորապէս վճարելով, իւր ընտրողական իրաւունքն ալ ըստ Սահմանադրութեան դորձադրելու հըրաւիրուի:

Վսեմ. Յօհաննէս Այվազովսի մեծահանճար Հայ նկարիչն՝ հինգշաբթի օրը մայրաքաղաքէն մեկնելով Թէոդոսիա վերադարձաւ:

Չորեքշաբթի օրը իւր հրաժեշտին առթիւ Օգոստ. Սուլթանին ներկայանալով, Ն. Կ. Վնասիաութիւնը խիստ սիրտիւր ընդունելութիւն մ'ըրաւ, և ժամու մը չտի հետը խօսակցելով բազմութիւն նկարներ ապրապրեց, որպէս զի հետզհետէ չլինելով իրեն զրկէ:

Լսածնուս նայելով, Օգոստ. Սուլթանն ուրիշ շատ պատուաւորական խօսքերէ ետեւ Վսեմ. Սարգիս պէյին դառնալով՝ յատկապէս դոհուլութիւն յայտնել է անոր՝ այս մեծահանճար նկարիչն իրեն ծանօթացընելուն համար, և աւելցուցեր է թէ դոհ է մանաւանդ հայազգի ըլլալուն համար:

Յետոյ Ն. Կայսերական վեհապետութիւնը հարցուցեր է Այվազովսիէ Եֆէնտիին թէ նա արանք պտտեր աչքէ անցուցէր էր: Երբոր Այվազովսիէ Եֆէնտիին ըսէ՝ պատասխաներ է, Վեհ. Սուլթանն անմիջապէս ծախային դործոյ նախարարը կանչել տալով հրամայել է որ Այվազովսիէ Եֆէնտիին արքունի նստարանը բաւելով պարտքընէ: Ն. Վսեմութիւնն ալ անմիջապէս Թէոդոսիայէն շքեղ մակնիշ մը բերել տալով, Այվազովսի-

իէ Եֆէնտիին առեր արքունի նստարանը տարեր և անձամբ անոր հետ պտտելով ամեն բան մանրամասնաբար աչքէ անցուցել տուեր է:

Վսեմ. Այվազովսիէ մեկնելէն քանի մ'օր առաջ 30 Օսմ. լիրա ցրելէն է ի Պատրիարքարան ի նպատակ փոքր Ասիայ սովետոյ:

Դիւան-Եֆէնտի և Խորհրդարան-Եֆէնտի Առ. Կրօնական Ժողովոյ Կրօնական Ժողով:

(Շաբ. Կր. Եֆ. 1603)

Կրօն. ժողովը իր հրատարակութեան տուած եօթներորդ. անօրէնութեամբ կարգելու պատկ դնել արուին՝ որ 20 կամ դոնէ 19 տարեւոյ հասակը չէ լրացուցած, և աղջկան՝ որ 16 կամ դոնէ 15 տարին չէ լրացուցած:

Այդ անօրէնութեամբն ալ Կրօն. ժողովը դարձեալ իր իրաւասութեան շրջանակէն դուրս կենէ. Կրօն. ժողովը յիշել պէտք էր թէ իրիմեան ամբաստանուեցաւ իրեն հակասահմանադրական, «եթէ Սահմանադրութեան վերաքննութիւնը չիւլութացնէ, շրջանակէն դուրս ելնել կ'ստիպուի» և ըսելուն համար՝ իսկ ինք չըսեր, այլ շրջանակէն դուրս կենէ արձակ համարձակ, որով, եթէ իրիմեան քանի միայն հակասահմանադրական էր, ինք էր հակասահմանադրական կը հանդիսանայ: Կրօն. ժողովոյ ձեռնհասութեան վեր է ամենանայեցող տարիքը սահմանել. ինք կարող է միայն առաջարկել այդ մասին Ընդհ. ժողովոյ, և ու միայն կարող է այդպիսի օրէնք մը դնել. իսկ իր պարտքն է սորա դրած օրինաց դորձադրութեանը մասին հրահանգներ և պատուէրներ խրկել ում որ անկ է:

Գուցէ շատերուն տարօրինակ թրււին մեր այս դիտողութիւններն ու խորհրդածութիւնները, որովհետեւ մեք դեռ աշտաքուստ միայն՝ այսինքն մերթմոսահանադրական ենք. իսկ սոկոթիս, մարմինիս, ուղեղիս բոլորովին ուրիշ խմբէ թրծուած է: մեք ինչպէս կարող ենք հասկանալ թէ ինչ է օրէնսդրական և ինչ վարչական իշխանութիւնը, թէ ո՛ր կը վերջանայ Ընդհ. ժողովոյ իրաւասութեան սահմանը և ո՛ր կ'սկսի վարչական ժողովոյ ձեռնհասութեան սահմանը, ինչպէս նաև չենք կարողացած որոշել սոցա և վարչական խորհրդոյ ձեռնհասութեան սահմանները: Այս խառնաշփոթ վիճակը ո՛րչափ տղիւթութեան՝ նոյնչափ եւ մեր աղբային մէկ պակասութեան հետեւանքն է դժբաղդաբար: Հայր թաղ. խորհրդոյ անդամ եղաւ մի, կը կարծէ որ ամեն բան եղաւ, և թէ իրմէ մեծ Աստուած միայն կայ*, ոչ միայն թաղական խորհրդոյ՝ վարչական խորհրդոյ անդամն ալ նայն աչքով կը նայի վարչ. ժողովոյ վրայ. իսկ վարչ. ժողովը անդամն երեսփոխովոյ քիւն կը խնդայ, երեսփոխանն ալ աղբին: Հաւաքէ՛, ընթերցող, քանի մը տղայ երգեցիկ խումբ մը կաղմուլ համար, որոշէ իւրաքանչիւրին ձայնի տեսակն ու ատարձանը, այդ կերպով կաղմուած խումբը 3—4 խմբակի բաժնէ, ամեն մէկուն իր եղանակը սովորեցուր զատ զատ և յետոյ բոլորը միասին երգել տուր, պիտի տեսնու որ ո՛չ միայն իւրաքանչիւր խմբակի՝ առանց իրեն ուրոշեալ աստիճանին և ներդաշնակու-

* Խօսքերնիս աղբային շրջանակի ներկատմութիւն է, վատնել այդ շրջանակէն դուրս բարբառի տարբեր կերպով կըրտահ և կը վարուի Հայը:

թեան ուշ դնելու՝ միւսներէն բարձր երգել պիտի ձգտի, այլ և խմբակաց իւրաքանչիւր անդամը քան զիւր ընկերներն աւելի բարձր պիտի պօռայ, և դու պիտի աճապարես ականջներըդ խցել՝ ուղեղդ այդ բարբառասկան ժխորէն ազատելու համար: Հայ աղայոց վրայ յաճախ դառնութեամբ սրտի դիտած ենք այդ ակնուր երեսփոխ. նոյնը կը տեսնենք աղբային գործոց թէ՛ պաշտօնական և թէ՛ մասնաւոր շրջանակներու մէջ, այսինքն է կարգաւորութեան, կանոնաւորութեան, ներդաշնակութեան, պարտուց և իրաւանց վերադարձութեան զգացմանց և գաղափարի պակասութիւն:

Քանի մը խօսք ալ միւսերի երախայից անուանց ցուցակին վրայ:

Կրօն. ժողովը այդ ցուցակը կը պատրաստէ և կը պատուիրէ որ «անկէ դուրս ո և է անուն չընդունուի և չդրուի բնաւ երախայից վրայ ի ժամ մկրտութեան» Կրօն. ժողովը անհետ լանջուած թէ Հայերը դանաղան օտար անուններ կը դնեն իրենց զաւակաց, փափաքել է՝ դուրսի աղբայիւթութեամբ՝ այդ օտարախորդ անուններն Հայոց մէջէն արտաքել: Բայց, ինչպէս որ ըսինք արդէն, որոշում մ'ընելէ առաջ լաւ մը խորհելու է թէ դորձադրելի՞ է արդեօք այդ որոշումն, և թէ ատոր դորձադրութեանէն փոխան չի պիտի ծագին: Բացառութեամբ: Պաշտօնական ցուցակը չլինելիք և Մկրտարանին՝ այսինքն Աւագանին քով կախեցինք, երախայ մը բերին մկրտելու, որուն ծնողքը կամ կնքահայրը անուն մը կուզէ դնել որ թէ և հայկական է, բայց յիշեալ ցուցակին մէջ մտցուել է նշանակուելու, կամ թէ և հայկական կամ քրիստոնէական չէ, բայց երախային տէրը կուզէ որ անպատճառ այդ անուամբ մկրտուի տղան: Մկրտող պաշտօնէին այդ դէպքին մէջ երկու կերպ կրնայ վարուիլ կամ երախային արեւը սիրտը չկոտրելու համար (պէտք չէ մոռնալ որ իր սպարտաք անկէ է) անոր կամքը կըրտաւորէ և Կրօն. ժողովոյ որոշումն ոտնակոխ կըլլայ, կամ չկատարուի և դժուարութեան պատճառ կըլլայ: Երախային տէրը կը վշտանայ, կը քիչ կընէ և «գուցէ մկրտես նէ՛ ես մկրտող կը դառնամ» ըսելով՝ հայր Վիլհելմիտին կամ պատուելի Տուսյթին կը դիմէ, որք գրկաբաց կ'սպասեն զինքը: Կրօն. ժողովը՝ կարելի է՝ ըսէ թէ Բնական մը համար իր եկեղեցիէն բաժնուող Հայ հայու թէ գոնուի կը պատասխանէ: Երախային փառքը օգտին մը համար իրական փառք միշտ ցաւալի է, մանաւանդ երբ առանց այդ փառքին պատճառ ըլլալու ալ կարելի է առաջադրեալ նպատակին հասնել և թէ՛ անւան մը համար իրենց եկեղեցիէն բաժնուող հայեր կրնան գոնուիլ, վասն զի խնդիրն զգացմանց վերաբերեալ խնդիր է: Մէկը՝ իրեն սիրելի եղած անձի մը քաղցր յիշատակը յիշողութեանը մէջ միշտ կենդանի պահելու համար կամ աղէտ անապաշտութեամբ և նախապաշարմամբ մ'իր գաւկին կամ սանին այս ինչ անունը կուզէ դնել դուռն չեա թողուր որ այդ միւլթառութիւնը վայելէ և միջնադարեան կղերական հօգուով մը անոր զգացմանց իսկ արեւը կուզես բռնել թու պաշտօնող այդպիսի խնդրոց մէջ Բնական յարգել է և ոչ թէ Բնական՝ Բնական:

Թող Կրօն. ժողովը քրիստոնէական և հայկական անունաց ցուցակ

մը չլինէ*, ըսելիք մը չունենք բաց ի նորհակալութենէ. բայց թող պատահէր և արգելք չդորձածէ հոն՝ ուր միայն համազել է իր պաշտօնը, և աննշան ու երեւոյթական օգուտներու յուսով իրական փառքներու պատճառ ըլլալէն զուրկ: Ամեն աղբային աշտառնէի դիտուող պարտքն է հանրական անօրէնութիւն մը ընելէ առաջ խնդրոյն ամեն մէկ կողմն հասուն խորհրդածութեամբ քննել, անկէ յաւաստեալ օգուտները՝ ծագելիք փառքներուն հետ բաղդատել, և եթէ օգուտը փառքն շատ աւելի մեծ ըլլալուն անժխտելի հաւանականութիւն կայ, —այն ատեն միայն անոր դորձադրութեանը ձեռնամուխ ըլլալ: Մեր կարծիքով՝ այդպիսի հանրական խնդրոց մասին վերջնական տընօրէնութիւնը ընելէ առաջ՝ լաւ կըլլայ որ յայտարարեն լրագրաց միջոցաւ թէ դիտաւորութիւն ունին այս կամ այն անօրէնութիւնն ընելու: Աղբային խնդրոց վրայ մտածող անձինք առիթ կուենան կանխաւ իրենց դիտողութիւններն ու խորհրդածութիւններն ընել, որք յաճախ կրնան Աղբ. անվարձ պաշտօնէից դործը դիւրացնել, և երբեմն ալ թերեւս ահա և անմահ անօրէնութիւններէ դալիք նիւթական կամ բարոյական փառքաց առջեւ առնուել վարչական ժողովը ամեն հանրական խնդրոց նկատմամբ պէտք է այս կերպով վարուին՝ նախ՝ զի այդ խնդիրները շուտափոյթ անօրէնութիւն պահանջող խնդիրներ չեն, և երկրորդ՝ զի անկարելի է որ բաւական լինին ամեն հանրական խնդրոց մասին օգտակար և դորձադրելի անօրէնութիւնը ընել՝ առանց այլոց մտաւոր ձեռնադրութեանը պէտք ունենալու: Ամենէն յառաջադէմ աղբաց մէջ անդամ վարչութիւնը հանրական կարն որ խնդրոյ մը մասին կարգադրութիւն ընելէ առաջ՝ հրապարակ կը հանեն զայն, և մինչև որ երկուստ ամեն ամեն կողմը չընտուի, չըստաւանուի, վերջնական անօրէնութիւն չեն ընել: Որչափ առաւել իրաւունք ունինք նոյնը պահանջել մեր վարչական ժողովներէն: Պարտք կը համարինք շրջանահակալութիւնիս յայտնել իրենց որ դէժ արգէն եղած անօրէնութիւնները հրատարակելու օգտակար և սահմանադրական վարչութեան մը վայելուէ դադարաբար յղացել են և կը դորձադրեն: Ասոր հետ մէկտեղ պարտքերն է և խոստովանել թէ մանաւանդ մեք երեսփոխանք շատ պարտադանք ենք, որովհետեւ ցարդ մեզնէ խիստ քիչերը քննութեան և խորհրդածութեան առարկայ ըլլին վարչութեան հրատարակած անօրէնութիւնը, և մեք այդ քիչերէն ալ ըլլալու վառքը չունինք: ուստի անցնելէն մէջ ըրած պարտադանքութիւնիս ներկայից մէջ քաւել ուղեցինք: Եթէ հանդամանքները ներեն, ասկէ ետքն աւելի ճշգրտութեամբ պիտի կատարենք մեր պարտքը, և մեք

* Աթէ ներքի է, կուտարակները որ Կրօն. ժողովը ցուցակ մ'ալ պատրաստել տուց այն օտար անունաց, որ մուտ դըտած են Հայոց մէջ, իւրորդանչիւր անւանց առջին նայնանչան Հայ անուն դնել տայ, և այն անուններուն՝ որոց համազօրը չկայ՝ նշանակութիւնը բացատրէ:

Շատ անգամ այն բանը որ անհասկաւ նալի է տղէտ մարդոց համար, մեծ յարգ ունի, ինչպէս որ յայտնի է, մանաւանդ յատուկ անունները (որ թէ և ի սկզբան հասարակ անուններ եղած են ինչպէս որ տառը ալ ածականներ)՝ անհասկանալի ըլլալուն համար դրաւիչ գործութիւն խորհրդաւոր նշանակութիւն մ'ունենի, բայց երբ բացատրուին՝ տարակոյս չկայ որ կը կորուստեն դոյն:

իրաւունքը գործադրելու աւելի նա-
խաճախելու պիտի լինին:

22 հոկտ. 74

Խառնուրդ

Հ. Իսկանդար

... Խառնուրդային էջերում:

Ամեն Սրբազան Պատրիարքին մի նա-
մանը կարգադրեց պատուական Մատիւսի
1602 թիւին մէջ:

Ուրախ եմ: Ասիս լրագրին խառնա-
նութիւնը ինձ համար զիտաւորութիւն
առնելու շարժառիթ էր եղաւ որ մի կա-
րէն ճշմարտութիւն հոգի ունենալով
առնալովս կը հրատարակուի և հայած
առնած անմեղութիւնը կը պարտադրուի:

Բ. Դուռը Պատրիարքարանի առա-
ջարկին համեմատ նիւթական զիտուի եւ
թարիւղով նիւթական պատմեց ըզիւնդ
բայց Ս. Պատրիարքը իւր այդ նամակով
բարոյապէս կը պատժէ այն ամեն թեր-
թերը որք Ամեն խորհրդին Սրբազանին,
վանք. Օտեան էջերում, ինչպէս նաեւ
Մեծ. Դուռը թեան էջերում գէթ չա-
րաչար գործարարութիւններ և բարոյապէս
կը հրատարակեն:

Այսչափ ժամանակէ հետէ այդ վեր-
ադարձութիւնները և նախատեսները հրա-
պարակաւ կը իրականանան որ, բայց
մինչեւ ցայսօր մի պաշտօնական ծանուցում
խիղճը տեսնուած որ հերքելու ըզիւնդ:

Եւ չը պիտի խօսիմ հոս Սրբազան
Պատրիարքին նամակին այն մասին վրայ
որով կը յայտարարէ թէ ինք. իւր նա-
մանադրական Պատրիարքը կապալդուած
է և չէ կարող թող չը տալ որ այս ինչ
անձը քաղ. ժողովին և այն ինչ անձը
կրօն. ժողովին մէջ բաղմի: Եւ չեմ ու-
զեր մանրամասն բացատրել հոս թէ մի
Սահմանադրական պատրիարք այս պա-
րագային մէջ ինչ աստիճան իրաւաւոր
թիւն ունի, այլ կուզեմ խօսիլ նամակին
այն կէտին վրայ միայն որ ուղղակի ինձ
կը պատահի, իւր խառնուրդ Սիս լը-
րագրին:

Սրբազան Պատրիարքը կը գրէ թէ
«Ասիս լրագրին» Ազգային Ընդհ. ժողովը
հոխելով ցրտելու համար զժողովուրդը
քանկոյ գրգռելուն վրայ, ցաւօք որով և
գրեթէ ակամայ. Բ. Դուռը գիր դանդա-
տանայ գրել պարտաւորեցաւ Ազգ. վար-
չութիւնը:

Արդ. կը խնդրենք Սրբազան Պատրի-
արքին և «գիր դանդաւանայ» գրող
վարչութիւնին որ յայտնեն պարզապէս
թէ Ասիսի ո՞ր թիւին մէջ ժողովուրդը
հրաւիրած ենք որ Ազգ. Ընդհ. ժողովը
«կոխելով ցրտել»:

Այսպէս թէ մէկ քանի անգամ կըրի-
նած ենք որ Ազգային Ընդհ. ժողովը իւր
պատկառելի գիրքը և իւր բարոյական
մեծ նշանակութիւնը կարուստծ է ժողո-
վուրդին առջև, քանի որ ժողովուրդը
բիրտաւորուի, փառապանքի և Ամբոս
սիրտի պէս ամբաստանալ անձեր կրտես-
նէ հոն, որոց համար «օրինաւոր բողո-
քադիր» ի ձեռն ժողովոյն զիտած և մի-
խանորդներ կարգելով դատ վարել ու-
ղած է, բայց Ազգ. վարչութիւնը չէ հա-
ճած: Քանի անգամ կրկնած ենք որ Ազգ.
Ընդհ. ժողովը անհրաժեշտ հարկ է որ
«լուծուի» և այնպիսի եղանակով և այն-
պիսի արարներէ կազմուի, որ Թուրքա-
տանի Հայ ազգին բուն ներկայացուցիչը
հանդիսանայ, բայց երբեք չեմք զրած թէ
պէտք է որ ժողովուրդը «կոխելով ցրտ-
ել» Ազգ. Ընդհ. ժողովը:

Այլ սակայն մեր յանցը այդ բաներով
նշանակուած կը տեսնենք Ս. Պատրիար-
քին հրատարակած նամակին մէջ:

Ուրեմն Սրբազան Պատրիարքը և
Ազգ. վարչութիւնը կամ այնպէս կը հա-
մարին թէ Ընդհ. ժողովը կոխելով ցր-
տելէն զատ օրինաւոր միջոց չկայ որով
կարելի լինի լուծել զայն և կամ մեր դը-
րածները հարեանցի կարգացած են:

Այս վերջինն աւելի հասանական կը
թուի մեզ. զի երբ մի անգամ խառն ժո-
ղովը ըզիւնդ իւր ատենը հրաւիրելով,
պատուիրեց որ Մամբը կալիսկապին
նկատմամբ զրած ատենին՝ դադան չը
կոչենք: Կայն, պատասխանեցինք որ թէ
և շատ բաներ զրած ենք նորա նկատ-
մամբ, բայց երբեք դադան չեմք անուա-
նած: Եթէ կը պնդէք, ցուցե՛ք այդ թեր-
թը: Եթե՛ք ում Ս. Պատրիարքը յայտարա-

րեց ասելով թէ չեմ պնդեր այդ մասին,
զի ես ծանր դրաղութեամբ պաշարուած
ժամանակ չեմ ունենար լրագրինը ամ-
բողջապէս աչքէ անցունել, այլ հարկ
կրնամ հարեանցի կարգաւ զնոսաւ եսլն:

Սակայն դարմանալի կէտը սա է որ
Ս. Պատրիարքը ուրիշ լրագրները հարե-
ւանցի կարգացած ատեն՝ նոյն դատա-
պարտելի դրութիւնները իւր աչքին առ-
ջեւն կը փախչին, իսկ մեր լրագրերնե-
րը հարեանցի կարգացած ատեն՝ չըրած
ներնալ ալ դրուած կը տեսնուին:

Այս ալ գրեցէ մեր գլխաւորութիւնն է:
Երբեք... խմբագրի, որ անկողմ
նախալ ողիւղ չորհէ անձը ներկայ ալ չը-
բատարակել և Պատրիարքարանի ձեռքով
խղճուած մի ձայնի արձակած այն բո-
ղբն ալ Ս. Պատրիարքին նամակին հետ
ժողովուրդին անաշուտ ատենը ներկա-
յացունել:

1874 հոկտ. 31 Որով մնամ ձեզ
ի Կ. Պոլիս շնորհակալաւ
Ս. Գրիգոր-Քալանդար

Հետեւեալ ոտանաւորը մեր Հռո-
մէական ազգայիններէն Սեծ. Պողոս
էֆէնտի Շալեան, որ իսկիւնտարի
Պատժական ատենին դատաւոր է,
Գերահռչակ Հայ նկարիչ Այվազովսքի
էֆէնտիին մատուցած է անձամբ:

Պողոս էֆէնտի ինքն ալ նկարիչ
ըլլալով, իր ձեռագործները ներկա-
յացուցած է մեծանուն նկարչին եւ
անոր հաւանութեանն ու դուրս-
թեան արժանացած:

ԱՌ ՄԵԾՆ Յ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ
ՊԱՏԿԱՆԱԼ

Լոյս լոյս լուսոյ դաւա՛լ՝ ժպտել ուղեց
Ազգային և երբեմն զիտ որդիներ լոյս
իմ և յոյս:

Ձիւ մերժեցիր անդ թաւար այլ պատե-
ցար, Այվազովսքոյ եղբ գերի վրձնոյն և բոյս:

Փախեալ յինչ, զի դու կայտառ, յող-
դորդ, հպարտ,
Որ բնակի կարմիր խաւքի զուգարթ,
Տեսանելով զիտ դրաղեալ հոգով կենաց
է՛հ, աստղեր, զիտ ոչ լիով սիրել կարէ
աղքատ ոք մարդ:

Ձիւ լոկ սիրոյ միտ դնելով՝ ոչ խորհիւ դու
թէ սիրելիք ուտէ հացիկ կամ փուշ կամ
յարդ:

Փախեալ յինչ, զի փոյթ կենաց հեռառիւ
Քաղաքական զիտ միջոց մէջ յատարկե-
ր փախեալ յինչ, զի նախանձնոտ միջոց
կամիս:

Ձիւ սիրեցից զամեն նուաղ քան զքեզ:
Փախեալ յինչ, զի յոյս երկիր լուսաւորած
Ուր յորդարար տեղաց արեւ հոգ ու նա-
խանձ:

Ժպտին մարդիկ ոչ լուսնեն թէ ինչ է
Պատկերահան որ արկանէ լուսոյ տանձ:
Ձիւ մերժեցիր, զի դու ի մէջ տարերց
իրեւ մեծատուն:

Որ ինքնօրէն երբեք ումեք ոչ մտանել
տայ յիւր տուն,
Ձիւ մերժեցիր, զի ի ձեռաց խնց կալեալ
գլխաւոր

Ոչ խոնարհիս կարապետէր ընչաւէտ ոք
խառնառն:

Գնա՛ արաւ, փախել յինչ, անդ ութ դու
լոյս:

Ըզբեզ պաշտել աստ ի Պոլիս է դոյզ ի
դոյզ:

Ծատ են Հայոց վերք ու ցաւեր որ առաւել
են սուր դրչիս կարօտ քան թէ փախուկ
վրձնոյս:

Գնա՛ յինչ, Այվազովսքի թող ի վերայ
ժայիլ գրեզ բեռնէ:
Ձիւ դու հպարտ երկնոտ մանկիս փախեալ
չոյց ի դողալուն մատեր:

Ձիւ ի վերայ դու կտախ ոչ կամեցար ծա-
ւալի:
Այվազովսքի վարարեալ զքեզ կարգաւ
յեթերէ:

Ովկիանոս Զուրցն ի վեր զքեզ քարէ ան-
վէհեր,
Ճախեալ շնորհ ծաղի ի սեւաւ սրտիս պէս
սեւա յըստուերէ:

Գնա՛ յինչ, Այվազովսքի թող զիտ վրէժ
թող թախէ:
Ձիւ մեծութիւն քո խոստովեան իւր հան-
ճարով թող չափէ,
Խորաքնին հայեցումով զքեզ զիտ ետ
թախարար
Խողով խիժով անբախտելի զաջ ու բա-
ղուկ քո կտախէ,
Ձիւ ոչ ծաղեալ դու յիս յօժար, հըրա-
մանաւ Հայ բաշին
Ալեաց սրկոր զօգանջելով թող զիտ լոյս
լախէ:

Երբեք, ներկէ՛, Այվազովսքի, ամեն երկրի
տեսարան
է այս երկրի ստեղծողին ողբոյ մեկնիչ
նոր բերան:
Երբեք, ներկէ՛, Այվազովսքի, տուր մեզ
յուսալ ստեղծ
Անու զարմէն տեսէք սրտիս միտ յա-
ջորդէ ձեռքս,
Երբեք, տէր իմ, դուցէ՛ դուրսով անմա-
հական քո վրձնոյ
Ձեռնոցին երես Հայոց վաւր ի դոյն ա-
մարան:

Պողոս Յ. Շալեան

Ոսկեդարեան յանցանական նախ-
նադատ յատենի դատարար:
9 նոյեմբեր 1874
Կ. Պոլիս

Ե. Ջ. Գ.

Բարեգործական ընկերութեան
Տնօրէն ժողովը պարտք կը համարի
հրաւիրել ընկերութեան բոլոր ան-
դամներն, որք կուզեն շարունակել
իրենց անդամակցութիւնը, բարեհա-
ճին ներկայ 1874 տարւոյ բաժանոր-
դագիրն վճարելով ընդունել իրենց
անդորրագիրը կիւղէնեան Պետրոս Է-
ֆէնտիի գրասենեակէն (Մեծ Հալիլ
բաշա խան թիւ 3 ի Ղալաթիա) մին-
չեւ տարւոյ վերջը, որպէս զի Ընդհ.
ժողովոյ գումարման օրը՝ ընկերու-
թեան անդամաց ճիշդ թիւը յայտնի
ըլլալով, հիմնական կանոնադրութեան
համաձայն հարկ եղած անօրէնութիւն
ներն կարենան օրինաւորապէս որոշ-
ել: Տնօրէն ժողով Բարեգործա-
կան ընկերութեան (Կնիք)
1874 նոյեմբեր 1
Ղալաթիա

Ե. Ջ. Գ.

Գալորցաւորաց ընկերութեան Դ.
շրջանին Բ. եռամսեայ Ընդհ. ժողովը
պիտի կատարուի, յառաջիկայ կիրա-
կէ՛ նոյ. 3, Բանկալթի Ազգային
Գերեզմանատան վարժարանը ժամը
ճիշդ 7ին:

Կը խնդրուի Մեծ արդոյ անդամ
ներէն որ բարեհաճին ներկայ գտնե-
լի եւ իրենց պարտաւորութիւնները
կատարել:

1 նոյ. 1874 Նախագահ Ընդհ. ժո-
ղով: Գալորցեան

ԹԵՏԻՈՆ ՕՍՄԵՆԻԻ

ԿԼՏԻԿ ՓԱՇՍ

Վերջին Թ. Եֆէնտի վարչութեան

1874 նոյ. 2 շաբաթ գիշեր ժամ 3

Ս. Ներկայացուցիչ ԲԱՄԱՆՈՐԳԱԳ-
ՐՈՒԹԵՍՆ

ԺԱՄԱՆԱԿ

Նախերգ ի մի տարար

Խօսք Երաժշտութիւն
Պ. Ե. ՄԵԼԻՔԵԱՆԻ Պ. ՅՕՍԵԲԻՆԻ

Ա Ն Զ Ի Բ

Ժամանակ խմբակն
Պ. Ս. ՎԵՆԵՐԵԱՆ Գերատանական խումբ

Յ Ո Յ Ս
ՕՐ. Ե. ԳՐԱԳԱՇԵԱՆ

Առաջին անգամ՝ ներկայանալի

ՍԷՆ ԹՈՒՕԻԷՋԻ
ՏԻՒԻՆԸ
Թատերգութիւն հինգ արար
Հեղինակը
Պ. Պ. Անիկոն Պուստուա Տըլազ ուրի-
թարդ մտնիչ: Պ. ՄԷԼԱՅԷՆ Ս. Քալանդար
Ե Ր Գ
Թեթեւեւ ՍԻՐԱՀԱՐԸ
Պիտի երգէ Պ. Տ. Թաւաղաճեան:

Առջ. — Ահա տակ վարչութիւն
իւր թատերական իններորդ շրջան
սկսելու բարեբաղդութիւնն ունեցաւ,
բաղդ մը որ թէ իրեն եւ թէ իւր դե-
րասանական խմբին մեծ պատիւ է
թէ ներկայիս եւ թէ առաջային մէջ:

Ուստի՝ ինչպէս իւր կէտ նըպա-
տակին է միշտ յառաջադիմութիւն,
եւ միակ փառաքել ծառայել իւր սի-
րելի Ազգին ահաւասիկ իրաւամբ ա-
ւել յառաջադէմ քայլերով եւ աւելի
փայլուն վիճակի մը մէջ կը ներկայա-
նայ իւր ազգայնոյ, եւ ըստ իւր ա-
ռաջադրութեան նախընթաց տարի-
ներէն աւելի գոհացունել կուզէ թա-
տերասէր հասարակութիւնը: — Ահա
ասոր համար իւր առաջին ներկայա-
ցումը կ'սկսի ՍԷՆ-ԹՈՒՕԻԷՋԻ տիկի-
նով թատերգութեամբ մը՝ որ Եւրո-
պայի ամեն ազգաց մէջ առանց հին-
նալու եւ ամեն անգամ իրեն նոր
թատերակազմ մը անվերջանալի ծա-
փահարութեամբ ընդունուած եւ մեծ
տպաւորութիւնն ու անվահեր ընթաց-
քայ ստիւն:

Վարչութիւն յաւսով է որ ազ-
գային թատերասէրք իւր յառաջա-
դիմութեանը մէջ զինքն աւելի խը-
րախուսելու համար իրենց յարգելի
ներկայութեամբ պիտի պատուեն
զինքն եւ վարձատրեն իւր քրտնաթոր
աշխատութիւնն ու անվահեր ընթաց-
քայ:

Սովորական դիւներ
Տիկնայք մուտք վճարելէ ազատ են:
Բաժանորդագրութեան համար
հարկերն 20 զեղչ կը լընայ:

ՎԻՐՊԱԻՐ

Անցեալ շաբաթ աւուր Մատիսի
երկրորդ երեսին չորրորդ սինակին
27րդ տողին մէջ ալ Էրաճ բառն առա-
ւել գարձեալ նոյն թերթին երրորդ
երեսին առաջին սինակին Յէրք տո-
ղին մէջ առաջաւոր բառն առաջաւոր
ալ կարգացունին:

ԿԵՐԵՊԵՏ ԵՂԱՐԻԿԵԱՆ

ՏՕՔԹԵՕՐ ԱՏԱՄՆԱՐՈՒԹԻՅԱՆ

Պատիւ ունի իմանալու յարգոյ
հասարակութեան եւ իւր յարգելի
յաճախորդաց, որ իւր բնակութիւնը
փոխադրած է ԼէՏ սօքաղը (Ուր Բո-
լոնք) Ն. 9, ուր պիտի ընդունի առա-
ւօտեան ժամը 9ին մինչեւ կէս օր, իսկ
կէս օրէն ետքը ժամը երկու քէն մին-
չեւ ժամը 6: Ըոտ տաճկայ՝ առաւօ-
տուն 2ին մինչեւ 7, կէս օրէն ետքը
9ին մինչեւ 4:

4

ԻՒՆՆ

Աստիւրի Շահանէ Նանը ազիլ ի-
տարէրի իչին միւսայտիս օրւնաճադ-
100000 քիլէ եւ մուշաք բուժելի օրւոյ
տայընն պէճէր քիլէսի 35 դրուշա
թալիսի էօհտէսինտէ օրւոյ, թըշրի-
նի սանիկի բուժիչին տէօրութեան
փաղոր իրթէսի կիւնիւ դարարը դա-
թիսի վերկիլէճէ լինտէն, իմաստնա
թալիս օրանլարըն եէվի մէքիւր-
տէ Տարի Շուրայի ասքերկիլէ կէլմէճ-
րի:

26 Թըշրիլի էվիլէ 1874

Պապը Սէրասքէր

